

Հ Խ Ս Հ Ա Յ Ո Ւ Թ Ա Յ

ՊՐՈՖ. Հ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԾԺԿԵՐ  
ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ  
Ա Մ Ա Ռ Ա Ց Ի Ն Լ Ո Ւ Ծ Ի Ց

Պ Ե Տ Ա Կ Ա Խ Ա  
Յ Ե Ր Ե Վ Ա Խ

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Բ Ո Ւ Կ Յ

1937

ՀԱՅՀ ՏՐՈՒԿՈՄԱՆ

616.34 - 053.2.

ՊՐՈՖ. Հ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԾԺԿԵՐ  
ՑԵՐԵԽԱՆԵՐԻՆ  
Ա.Մ.Ա.Ռ.Ա.Ց.Ի ՀՈՒԹԻՑ

Պատ. Խմբ. բժ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ  
Տեխ. խմբ. Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Մրգագիշ Ա. ԱՐՁԱԲԱՆՅԱՆ

## ԻՆՉՈՒ ՅԵՆ ԾԾԿԵՐ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ ՀԱՃԱԽ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ

Ծծկեր յիրիխան քնքույշ ե, անկայուն, նրա  
որդանիղմի դիմագրողականությունն անհան ե, նրա  
որդանների փունկցիաները յենթակա լեն արագ և  
բուռն փոփոխությունների: Փոփոխություններ կըում  
են նրա բոլոր որդանները:

Մաշկն արագ խոցվում ե, Անձմաքրությունը,  
անհարմար ու կոշտ հագուստը նրա վրա առաջացնում ե  
ցաներ, թեփոտում, մարմաջ, քոր, թարախային բոր-  
բոքումներ (կայծոփկներ — ֆորունկլի):

Այդպես են նաև բերանի և շնչական ուղիների  
լորձաթաղանթները:

Ցեթե մանուկն ապլում ե վատ ողում, ապա նրա  
դիմագրողականությունը նվազում ե, բերանում կաթ-  
նախոտ ե (МОЛОЧНИЦА) առաջանում: Ցեթե նրա ձեռ-  
քերը մաքուր չեն, լեթե նա կեղտոտ իրեր ե դնում  
բերանը, ապա նրա բերանի լորձաթաղանթի վրա  
սկսվում են զանազան տեսակի այլ բորբոքումներ,  
որինակ, ափուային, խոցային բորբոքումներ,  
վորոնք առաջացնում են տաքություն, առատ թքա-  
հոսություն, ցավեր ծծելու և խմելու ժամանակ:

Ցեթե ծծկերի շրջապատում գրիպով հիվանդ կա,



1-36989ր

Գլավ. լիազոր Ա. 1188

Գառվեր 1316, տիրած 2000

Հրամ. 8922

Հանձնված ե արտադրության 1 նոյեմբերի 1936 թ.

Մտորագրված ե տպագրելու 2 դեկտեմբերի 1936 թ.

Գետերատի ապարան, Երևան, II Քնունյանցի, 4

ապա ամենից շուտ ծծկերն եւ վարակվում, Յեթե նա  
չի սովորել մաքուր, թեկուզ և ցուրտ ողի, յեթե համա-  
պատասխան հագուստ չլինելու պատճառով նրա մաշկը  
չի ընտելացել արտաքին ջերմության փոփոխու-  
թյուններին, այդ դեպքում ամենաանշան քամուց նա  
«մըսում», հիվանդանում եւ:

Յեթե ծծկերը հիվանդանում եւ շնչական ուղիների  
վերին մասերի՝ քթի, ըմպանի, կոկորդի կատառով,  
այդ դեպքում այդ կատառն արագորեն տարածվում ե  
դեպի ցած, հասնում եւ բրոնքներին և բարդանալով  
թոքերի բորբոքում ե առաջացնում: Թոքերի բորբո-  
քումը ծծկերների լուրջ հիվանդություններից մեկն ե.  
Նա տալիս ե ահոելի մահացություն:

Զգայուն են վոչ միայն ծծկերի մաշկը, նրա  
շնչական ուղիների լորձաթաղանթները, այլև նրա ներ-  
վային սիստեմը, առանձնապես ուղեղի թաղանթները,  
վորոնց բորբոքումը մենինգիտ ե կոչում:

Ծծկերները հաճախ են հիվանդանում մենինգի-  
տով: Յեթե նրանց մեծ արգեն տուբերկուլոզյին վա-  
րակ կա, ապա վերջինս շատ դեպքերում, յերբ խախտ-  
վում ե ծծկերի որդանիգմի հավասարակշռությունը,  
տարածվում ե, հասնում թաղանթներին և տուբեր-  
կուլոզյին մենինգիտ ե առաջացնում, այսինքն մի  
հիվանդություն, վորից վոչ մի փրկություն չկա, միշտ  
ել վերջանում ե մահով:

Կա և մենինգիտի մի այլ տեսակ՝ համաճարա-  
կային մինինգիտ, վորի հարուցիչներն են մենինգո-  
կոլերը, ու տարափոխիկ հիվանդություն ե: Յեթե  
քաղաքում կամ շրջանում առաջացել ե համաճարա-  
կային մենինգիտ, այդ դեպքում մեծ թվով ծծկեր

յերեխաներ են հիվանդանում, կազմելով հիվանդա-  
ցածների թվի  $20^{\circ}/_0 - 40^{\circ}/_0$ -ը:

## ԻՆՉՈՐԻ ՅԵՆ ԾԾԿԵՐՆԵՐԻՆ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ՅԵՆԹԱԿԱՆ ԼՈՒԾԻ

Ինչպես յերեխալի մաշկը, շնչական ուղիները,  
ուղեղի թաղանթներն են լենթակա արագ հիվանդաց-  
ման, այնպես ել՝ շնորհիվ ծծկերի որդանիգմի քնքու-  
թյան, անկատարության և արագ խոցելիության, շուտ  
հիվանդանում են նուև նրանց մարսողական ուղիների  
լորձաթաղանթները:

Ծծկերի որդանիգմի այդ ընդհանուր անատո-  
մո— ֆիզիոլոգիկ հատկությունն առանձնապես նկա-  
տելի յե ծծկերի մարսողական ուղիների նկատմամբ:  
Այդ բացատրվում ե նրանով, վոր ծծկեր հասակում նրա  
մարսողական ուղիներն ունեն ուրույն, հասակին հա-  
տուկ առանձնահատկություններ: Այս շրջանում ծծկերը  
ամենաինտենսիվ աճն ե ունենում, նրա աճը միտարում  
յեռապատկիում ե. յերեխալի հասակն առաջին տարում  
աճում ե 20—25 սանտիմետր: Այդպիսի բուռն աճը  
պահանջում ե մարսողության բուռն տեմպ, նյութերի  
փոխանակության ուժեղ թափ, մարսողական ուղիների  
լոձրաթաղանթների, նրանց վրա գտնվող գեղձերի  
լարված և ինտենսիվ աշխատանք, վորակազի որդան-  
ները և հյուսվածքներն արագ կառուցվեն, վորպեսզի  
ամբողջ որդանիգմի աճումը կանոնավոր լինի:

Այդ հասակում սննդի պահանջը շատ մեծ է լի-  
նում: Սննդից մարսողության ուղիներում շինանյու-  
թեր են պատրաստվում որդանների ու հյուսվածքների  
կառուցման համար:

Վորքան ավելի փոքր ե մանուկը, այնքան ավելի մեծ ե նրա սննդի կալորիխաների պահանջը, Այսպես՝ առաջին լիբեք ամիսը լիրեխան իր քաշի լուրաքանչյուր մեկ կիլոյի համար՝ 30—110 կալորիխայի պահանջ ունի, յերկրորդ յեռամսակում՝ 120—90, յերրորդում՝ 110—80, չորրորդում՝ 90—70: Ուրեմն պարզ ե հետեւալը. վորքան ավելի փոքր ե լիրեխան, այնքան ավելի մեծ ե նրա ստամոքսա—ալիքալին արակտի աշխատանքը, այնքան ավելի ինտենսիվ ե սննդի յուրացման պրոցեսը, այնքան ավելի յեւ և քայլքալման պրոցեսը: Պարզ ե և այն, վոր յեթե մի որգան, մի հյուսվածք աշխատում ե մեծ լարումով, ապա նա ավելի հաճախ առիթներ ունի վնասվելու, խոցվելու, վորչափնրա կյանքի կանոնավոր պայմանները խախտվում են, վորչափ ներկա գեղքում նրա սննդցման մեջ թերություններ, սխալներ են տեղի ունենում:

Այսպես ուրեմն, մի կողմից՝ ծծկերի անատոմո-ֆիզիոլոգիկ առանձնահատկությունները, մյուս կողմից՝ նրա բացառիկ աճը պատրաստի հող են ներկայացնում, վոր այդ հասակում մարսողության սննդառության խանգարումները գառնան հաճախակի յիրեվույթ, վոր խիստ բնորոշ ե ծծկեր յերեխայի ախտաբանության (պաթոլոգիա) համար:

## ԼՈՒԾԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԾՄԿԵՐՆԵՐԻ ՀԱՍԱԿՈՒՄ

Մարսողության և սննդան խանգարումները՝ լուծը տեղի է ունենում ամբողջ տարվա ընթացքում. լուծն ամառվա տաք ամիսներին առանձնապես զգալի չա-

փերի յեւ հասնում յեզ այդ պատճառով այդ հասակի լուծը ամառային լուծ ե կոչվում:

Լուծը ծծկեր հասակում կազմում ե ծծկերների հիմանդրությունների 40 տոկոսը: Մահացությունն ամառային լուծից խոշոր ե, ընդհանուր առմամբ յերեք-չորս մեռած ծծկերներից մեկը մահանում ե լուծից:

Այս թվերը բավական պերճախոս են և ցույց են տալիս, վոր յերեխանների մահացության զգալի մասն առաջանում ե լուծից: Այստեղից բղում ե այն հետեւթյունը, վոր յերեխանների մահացության դեմ պայքարելու համար նախ և առաջ պետք ե պայքարել նըսանց մարսողության ուղիների խանգարումների դեմ:

Իսկ լուծի դեմ պայքարելու համար պետք ե ժիջոցներ ձեռք առնել՝ նախ և առաջ լուծ առաջացնող պատճառները վերացնելու համար:

## ԼՈՒԾԻ ՊԱՏճԱՌՆԵՐԸ

Լուծի պատճառները բազմազան են: Նրանք կարող են լինել մեկ և ավելի, զիսագոր տեղը բռնում են սննդի հետ կապված պատճառները: Աննդի վորակն ու քանակը այս գեղքում ահազին դեր ե կատարում: Խոշոր նշանակություն ունի այն, թե վորչափ համապատասխան սննդը ե ստանում յերեխան, վորքան եներգիա և մարսողական ուղիների լարում ե նա պահանջում յերեխայից:

Կարենք նշանակություն ունի և այն հանգամանքը, թե վարակված ե արդյոք սնունդը և ինչ վարակվելու:

Նմա ապես նշանակություն ունի նաև այն զիսակը, վորի մեջ յերեխան գտնվում ե ներկա մոմեն-

առում: Պետք ե հաշվի առնել այս, թե վորպիսի կազմը՝  
վածք ունի յերեխան, վորպիսի կոնստիտուցիա ունի,  
արդյոք որդանիզմն ամժաւ ե թե թույլ, թուլացած չե  
արդյոք նա նոր անցրած հիվանդություններից. կամ  
թե ի ծնե տկար չե նա, թերասուն, փոքր դիմադրու-  
գականությամբ ոժտված:

Այսուհետև կարեոր ե նշել և մի այլ հանգա-  
մանք, վորք վերացումը կատարելապես մեր ձեռքին  
ե, կախված ե միայն աշխատափոր մասսաների կուլ-  
տուր - կանցաղային մակարդակից: Դա խնամքի թե-  
րություններն են վորոնք ահազին բացասական դեր  
են կատարում ծծկերների ամառային լուծի ծագման  
ու գարգացման մեջ:

Վատ կամ թերի խնամքը կարող ե լուծի իսկա-  
կան պատճառ լինել և թուլացնել մանկան, քայլայել  
նրա առողջությունը, նախարամադրել ունախապատ-  
րաստել նրան զանազան հիվանդությունների համար:

Խնամքի հիշյալ թերությունների վրա անհրա-  
ժեշտ ե սրել ընթերցողի ուշադրությունը:

Վորոնք են այդ թերություններից զլիսավորները:

Տաք հագուստն ամառվա ամիսներին գերջեր-  
մացնում է յերեխային, իսկ գերջերմացումն առա-  
ջացնում ե նրա մեջ հիվանդագին կացություն, առաջ  
ե բերում մարսողական ուղիների լորձաթաղանթների  
և մարսողական գեղձերի փունկցիաների խանգա-  
րում - գեղպեսիա:

Բնակարանային անբավարար ողափոխությունն  
ու մաքուր ողի ոգտագործման բացակայությունը  
նույնպես վատառողջ աղեցություն են ունենում  
ծծկեր յերեխայի վրա, յերեխան թուլանում ե, նըռ-

ախորժակը կորչում ե, ժրությունը պակասում, ժպիտը  
մարում ե:

Ամառային տոթը հասակավորների վրա ել ե  
աղղում և ամենքս արդ զիտենք: Բայց մանուկների  
վրա այդ աղղեցությունը չտփազանց մեծ ե:

Արեկի կիզիչ ճառագայթները նրանց մեջ արա-  
գորեն առաջացնում են գերջերմություն, վորից նրանց  
մեջ կարող են առաջանալ, անգամ՝ ցնցումներ և լուծ:

Խնամքի թերությունների շարքին են պատկանում  
նաև ջրային մանիպուլիցիաների սակավությունը,  
շորի անմաքրությունը: Նրանք, ովքեր ամառային  
ամիսներին յերեխաներին չեն լողացնում, ջրով չեն  
լիում նրա մարմինը, նրան կեղուս շոր են հագցնում,  
ապա նրանք անգիտակցորին, անգիտարար վտանգում  
են յերեխայի առողջությունը, վորովհետեւ այդ բոլոր  
թերությունների հետևանքով նվազում ե մարսեցնող  
հյութերի արտադրությունը մարսողական տրակարի  
գեղձերում, իսկ այդ պատճառ և դառնում այն բանի,  
վոր որդանիզմի բջիջները կանոնավոր կերպով չեն  
կարողանում յուրացնել սնունդը և այդպիսով լուծ ե  
առաջանում:

Առանձին հիշատակության արժանի յե մի այլ  
թերություն. շատ մարդի՛ կարծում են՝ վոր փոքրիկ  
յերեխային ջուր չպետք ե տալ, վոր նա ջրի կարիք  
չունի: Պետք ե ասել վոր դա մեր տիտուր անցյալի  
ժամանգությունն ե, մի սխալ ե և վնասակար սխալ:

Մանուկներն ել մեզ նման ջրի կարիք ունեն:  
Զօրի կարիք ունի նաև նորածինը: Չե վոր նորածնի  
և առհասարակ յերեխաների մեջ նյութերի փոխանա-  
կությունն առանձնապես արագ ե կատարվում, չե վոր

յերեխան մեծերի նման ջուր և արտադատում յերբ  
կամներով և մաշկի միջոցով: Ցև ահա հեղուկի այդ  
պակասը, այդ ծարավը պետք է հագեցնել ջրով, թելով  
Նորածինները հարավային յերկրներում, ինչպիսին ե  
և Հայաստանը, տառապում են մի հիվանդությամբ,  
վորն անցողիկ ջերմ և կոչվում: Երեխան տոթ որերին  
ջերմում ե. բավական ե նրան ջուր խմացնել, վոր տառ  
գությունն իջնի: բավական ե նրան սիստեմատիկորեն  
ջուր տալ, վորպեսզի նա չտառապի «անցողիկ ջերմով»:

## ԼՈՒԾԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԾԾԿԵՐՆԵՐԻ ՄԵՋ

Ծծկերները տառապում են գլխավորապես յերեք  
ձեր լուծով: հասարակ լուծ (հասարակ դիսպեսիա),  
թունավոր լուծ (առքսիկ դիսպեսիա), վորը հալտնի  
ե նաև հին անուններով ստամոքսի և աղիքների կա-  
տառ, ժանկական խոլերա, կամ խոլերինա և աբնա-  
թարախայրն լուծ (ղիզենտերիա, կոլիտ):

Այն բոլոր ֆակտորները, վորոնք հիշեցվեցին  
վերևում, այն ե՝ անկանոն սնունդ, վարակում, խնամ-  
քի թերություն, կոնստիտուցիայի առանձնահատ-  
կություններ, կարող են առանձին-առանձին կամ  
զուգորդված ձևով—սնունդ և վարակում, սնունդ և  
կոնստիտուցիա — այս կամ այն տեսակի լուծ տառ-  
ջացնել:

## ՀԱՍԱՐԱԿԱ ԼՈՒԾ (ՀԱՍԱՐԱԿ ԴԻՍՊԵՍԻՍԻԱ)

Այս հիվանդությունն առաջանում է կամ հան-  
կարծակի, կամ հետզհետե: Ուտելուց հետո յերե-  
խան փսխում ե: Վորոշ յերեխանեք հաճախ են փսխում:

մյուսները մերթ ընդ մերթ: կումը տիպիկ, դիսպես-  
տիկ ե, որական 6–10 անգամ:

Կղանքը լինում ե ջրիկ, կանաչ գույնի, թթու  
հոտով, թթու ուսակցիայով և լորձ և պարունակում:  
Այնուհետև նկատվում ե սաստիկ զաղարտադրություն,  
փորը զոռում ե. յերեխան անհանգիստ ե, հաճախ ե  
լալիս, ջուտաշուտ արթնանում ե: Բայց ընդհանուր  
վիճակը համարյա անփոփի ե. զիտակցությունը  
պայծառ ե, հայացքը՝ պարզ, կենդանի, շրջապատով  
հետաքրքրվում ե. յեթե յերեխայի հետ խաղում են  
նա զրադշում ե:

Քաշը տատանվում ե, կարող ե պակասել, լեզվի  
վրա կաթնախտ կարող ե լինել, վորովայնը չէչ  
փքված, շոշափելիս՝ ցավ ե զգում:

Սովորաբար հասարակ լուծը, դիսպեսիան բա-  
րընթաց ե լինում, բավական ե դիետա նշանակել  
(մանավանդ միայն մայրական կաթով սնվողին), հան-  
գիստ տալ մարսողական տրակտին, նվազեցնելով կաթի  
քանակը և ջուր տալ հաճախակի, վորպեսզի կարձ  
ժամանակից հետո մանուկը կազդուրվի և իր առողջ  
տեսքն ընդունի՝ ցավերն անհետանան, զազերը պա-  
կասեն, կղումը սկսի կանոնավորվել և կղանքի գույնը  
կանաչից փոփոքի վոսկեկցույնի:

Ուրիշ լրան ե, յերբ հիվանդն արհեստականորեն  
սնվող ե, յերբ նա զուրկ ե այնպիսի հարազատ և  
անբասիր սննդից, վորպեսին կնոջ կաթն ե, վորը  
յերեխային և սնուցում ե և զինում պաշտպանողական  
նյութերով հանդեպ զանազան ինֆեկցիաների, հիվան-  
դությունների: Այս գեպքում զրությունն ավելի լուրջ

ե, վորովհետև յերեխան թերասում և լինում, քաշը շատ պակաս, ուրեմն և ուժերը թուլլը:

Այսպիսի մանկան վրա սովորաբար հասարակ լուծը անհամեմատ ավելի մեծ ազդեցություն և ունենում: Թեև հասարակ լուծն ընդհանրապես բարենպաստ վախճան և ունենում, սակայն նա վորոշ գեղքերում, մանավանդ արհեստականորեն սնվողների մոտ կարող է փոխանցվել ավելի ծանր տեսակի, թունավոր լուծի:

### ԹՈՒՆԱՎՈՐ ԼՈՒԾ (Տռիսիլ դիսպեպսիա)

Ամենանախնական նշաններն են փսխումն ու լուծը: Յերեխան փսխում և վոչ միայն ուտելուց, խմիլուց հետո, այլ անոթի ժամանակ. յերեխան այս դեպքում շարունակ կամ շատ հաճախ վորձկում են:

Կղում սկզբում լինում են այնպիս, ինչպիս հասարակ լուծի ժամանակ, բայց հետո հանկարծ դառնում են հաճախակի, որական մինչև 20—30 անդամ, կղանքնել լինում են ջրիկ, դեղնաշանաչափուն, լորձախառն:

Հաճախակի կղումը շուտով ջրազրկում և առաջ բերում, յերեխայի քաշը սաստիկ պակասում է, յերեխին 2—3 որում կորցնում են մինչև 2000 գրամ: Յերեխայի մաշկը չորանում է, ձկունությունը կորցնում, կնճռությունը է, ներս ցցվում, մկանները ձգվում են, ծանր գեղքերում մաշկը պնդանում է. յեթե մաշկը սեղմում են, ապա յերկար ժամանակ սեղմած տեղում փոս ե մնում:

Կարեռագույն նշանները ներփակին սիստեմի կողմից են, յերեխայի հոգեկան աշխարհում, հիվանդի գիտակցությունը յերբեմն մթագնում է, կամ միշտ

մթագնած ել լինում, յերեխան չի հետաքրքրվում իր սովորական շրջապատով. հայացքը պարզ չե, հառած և հեռում, քիչ հետո գիտակցությունը կորչում ե. յերեխան վոչ վոքի չի ձանաչում, վոչինչ չի նկատում. զեմքը նման ե զիմակի, քիթը սրվում է, աչքերը փոս են ընկնում. մաշկը հողի գույն ե ստանում. յերեխան անշարժ ընկած է:

Յերբեմն լինում են ակամա շարժումներ՝ մատների, լեզվի, ծամիչ մկանների, այնուհետև ջղաձգություններ են նկատվում: Շնչառությունը խորն ե, առանց ընդհատումների: Պուլսն արագ է, սրտի տոները՝ թույլ առաջին տոնը յերբեմն անհետանում ե: Մայրանդամները սառում են և մանիչակի գույն ունին:

Հաճախ տաքությունը բարձրանում է մինչև 40 աստիճանի: Արյունը թանձրանում է, շաքարը շատանում, մեղքը պակասում, յերբեմն չքանում և սպիտու շաքար և պարունակում:

### Ա.ՐՅՈՒՆԱԼՈՒԾ (կոլիս, դիզեներիա)

Կարեռագույն ախտանիշը կղումն է, վորը շատ հաճախակի տեղի լի ունենում մինչև 30 և ավելի անգամ: Նքոցներ են նկատվում, կղանքի մեջ մեծ քանակությամբ լորձ և լինում: Յերեխին լորձի հետ նկատվում է արյան կետերով կամ շերտերով խառն թարախ:

Յերբեմն նկատվում է բարձր տաքություն և թունավորման նշաններ, գիտակցության աստիճանական փոփոխություններ՝ սկսած թեթև մթագնումից մինչև կատարյալ վերացում, քաշի զգալի պակասում, արտահալտված դժգունություն, պուլսի անկում, ծայր ան-

գաների սառնություն, վորովայնացավեր՝ նոպաներով, անորդակի վատացում:

Հնթացքը տարբեր ելինում, նախած թե ինչ հարուցիչի հետ գործ ունենք. դիղենտերիական ամելիրայի, թե պարատիֆային բացիկի, թե դիղենտերիկ մանրեների: Հիվանդության տեխողությունն ելտարրեր ելինում. մի քանի որից մինչև 3—4 շաբաթ: Լուծը լերբեմն ցերկարաձիկ (քրոնիկ) ձև ելնդումում, մերթ անցնում եր, մերթ վերսկսվում:

Արյունալուծի ժամանակ բորբոքումները տեղի յեւ ունենում հաստ աղիքներում: Հաստ աղիքների բորբոքումները միշտ ընդունակ են կրկնվելու, ոեցեղիվ տալու: Այդ կրկնումները տեղի յեն ունենում առեցտարի, սովորաբար ամառվա ամիսներին:

## Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՆԽԵԼ ԼՈՒԾԲ

Լուծի դեմ կարելի յեւ պայքարել, այդ հիվանդությունը կարելի լի կանխել:

Այդ ապացուցում են վիճակագրական տվյալները, այնտեղ, վորտեղ, ծծեր յերեխալի մահացությունը մեծ չե, ստամոքսա-աղիքալին հիվանդություններն առաջնակարգ դեր չեն խաղում, այնտեղ մահացության ֆակտորների թվում առաջին տեղը գրավում ելերեխայի բնածին թուլությունը: Յեվ ընդհակառակը, այնտեղ, ուր մանկության պահպանության գծով պլանաշափ պալքար եմզում յերեխաների համար առողջ կենցաղ ստեղծելու, մահացությունը մարսղական ուղիների հիվանդություններից տարեցտարի պակասում եւ:

Լևինինգրադի որինակն այդ տեսակետից պայտուն եւ ուսանելի:

Լևինինգրադում ընդհանուր մահացությունը նախապատերազմյան շրջանում լեղել ե 24, 8%<sup>0</sup>,  
1920 թ. 20, 4  
1921 թ. 17, 3  
1922 թ. 22, 8  
1923 թ. 13, 8

Մահացության տոկոսն ըստ առանձին հիվանդությունների հետեւյալ պատկերն են ներկայացնում:

Տարիներ

1911—13 թ. 20 թ. 21 թ. 23 թ.

Ստամոքսա-աղիքա-					
յին հիվանդություններ	84,6	56,4	37,4	28,8	
Շնչական ուղին. հիվ.	50,0	31,9	29,6	28,8	
Բնածին թուլություն	53,5	73,1	68,0	48,1	
Մնացած հիվանդություն.	22,8	21	15	16,3	

## Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՆԽԵԼ ԾԾԿԵՐՆԵՐԻ ԼՈՒԾԲ

Վերոնք են այն միջոցները, վորոնցով մենք կարող ենք կանխել ծծկերների լուծը, վորոնցով կարող ենք նվազագույն չափերի հասցնել այն:

Դրանք այն գիտական նվաճումներն են, վոր ձեռք երերել մարդկային ստեղծագործ ու հետախուզող միտքը յերեխայի առողջապահության բնագավառում:

Այդ նվաճումներից կարենրագույնն այն բարձր գնահատականն է, վոր գիտությունը տալիս ե կնոյ կաթին իրքե լավագույն սննդի:

Կնոջ կաթն իր քիմիական կաղմությամբ ամենահարազատ և ամենահարմար սնունդն եւ յերեխայի համար: Մոր կաթը մարսելու համար յերեխայի մարսողական ուղիներից պահանջվում եւ ամենաթեթև աշխատանքը: Նա զերծ եւ վարակից, ստերջ ե, մի առավելություն, վորից զուրկ ե կենդանիների կաթը: Բացի դրանից կնոջ կաթն իր մեջ պարունակում եւ մի շարք կենսաբանական նյութեր, վոր մշակել եւ մայրը և միշտ ել ունի իր արյան մեջ: Այդ նյութերը ուժեղացնում են մանկան դիմագրական ուժը հանդեպ գանազան վարակների, նրան պահում են աշխույժ, կենսախինդ, զվարթ, թուլուուն: Այլ կենդանիների կաթի մեջ այդ նյութերը վոչնչանում են, յերբ կաթը յեփում են, իսկ յեթե չեն ել վոչնչանում, ապա նրանք հարազատ չեն:

Այս բոլորից հետո պարզ ե, վոր ծձկեր յերեխային կնոջ կաթով սնուցելու ամենազլիսավոր, հիմնական միջոցն ե, վորը ապահովում եւ նրան ամառային լուծից: Այդ տեսակետից մեր մանկական կոնսուլտացիաների առաջնագույն խնդիրը պետք է լինի ամենորդա պրոպագանդ մղել, վոր մալրերը ամենայն լրջությամբ հասկանան կնոջ կաթի նշանակությունը մանկան առողջության համար և լինեն պարտաճանաչ թի իրենց մանկան և թե պետության առաջ:

Լուծի դեմ ունեցած կնոջ կաթի կանխարգելիչ աղեցությունից ինքնին բղխում են մի շարք հետեւթյուններ:

Առաջին՝ գարնան վերջին կամ ամառվա սկզբին ծծից չկարել յերեխային, վորովհետև ամառվա աժիսները ծծկերի համար ամենավատանգավոր ըրջանն ե,

մանուկը զրկվում եւ իրեն հաբազատ, իրեն սնող և զինող սննդից և սնվում եւ արհեստական ստարածին սննդով, վորի յուրացման համար նրա մարսողական ուղիներն ավելի լարված աշխատանք են կատարում: Ինչ խոսք, վոր ամառվա ամիսներին ծծից կարելը մեծապես վտանգում եւ անպաշտպան մանկան:

Պետք եւ մի անգամ ընդմիշտ թողնել այն վնասակար միտքը՝ վորը, մնացել եւ մեզ կապիտալիստական կուլտուրայից: «Վտանգավոր եւն ամսից, մի տարուց հետո յերեխային ծիծ տալ». պետք եւ ասել, վոր դա դիտական անհեթեթություն եւ յերբ 9 ամիսը, մի տարին լրանում եւ գարնան կամ ամառվա ամիսներին, պետք եւ շարունակել ծիծը մինչև աշնան զովը, մինչև ամառային վտանգավոր սեղոնի վերջը: Իսկ ինչ անել, յեթե մայրը ծիծ չունի:

Վո՞րտեղից կնոջ կաթ հայթայթել գոնե ամտավատմիսների համար, յեթե այդ կաթը կանխիչ միջոց եւ ամառային լուծի գեմ:

Կուլտուրան միջոց եւ ստեղծել եւ այդպիսի գեղաքերի համար: Դա կնոջ կաթի հավաքակայաններն եւ: Ամերիկան ունի այդպեսի հավաքակայանների հարուստ ցանց: Գիտակից ամերիկուհին և իր մանկան և սնում և մնացած կաթը տալիս եւ պետական կաթի կայաններին: Յուրաքանչյուր առողջ մայր կարող եւ կաթ արտազրել վոչ միայն իր մանկան, այլև յերկու յերեխայի համար: Այդ ցույց են տալիս կատարված դիտողությունները: Ուրեմն, յեթե մեր մալրերը ցանկանան լինել որինակելի խորհրդացյին քաղաքացունիներ, այն ժամանակ կաթնակայանը կարող եւ ամբարել ռազմին քանակությամբ կնոջ կաթ:

Յեթէ անցնենք մեր խորհրդային կուլտուրական  
մեծ քաղաքները, այսուեղ կտեսնենք մի շարք կաթի  
հավաքակայաններ, հիմնարկություններ, վորոնց պե-  
տական նշանակությունը շատ մեծ է:

Մինչև հիմա Հայաստանի մայրաքաղաքը—ել չեմ  
խոսում ուրիշ քաղաքների մասին—գեռչի կազմակեր-

պել այդպիսի կաթնալիին բազա: Անհրաժեշտ է, վոր մեր  
մայրերն ու հայրերը պահանջ դնեն համապատասխան  
մարմինների առաջ կաթնա-հավաքակայան կազմա-

կերպելու գոնե առաջին հերթին Յերևանում:

Մծկեր յերեխանների սնուցման համար, բացի

կող կաթից, վորն ամենակարեորն է, կան մի շարք

այլ անդամյութեր, վորոնցով կարելի լի հավելյալ

կերպով սնել յերեխային:

Այդ ուղղությամբ մեզ մոտ, կլիմաչական պայ-  
մաններում անպայմանորեն հանձնարարելի յե հետե-  
յալ՝ տաք յեղանակներին պետք ե բոլորովին դա-  
դարեցնել կովի կաթն իրքե հովելլալ սնունդ տաքը:  
Գետք ե կովի կաթը փոխարինել մածունով, կաթնա-  
պուրն ել սպասով!

Ալդ տեսակետից գիտությունը գալիս և հաս-  
տատելու և ամրապնդելու ժողովրդսկան դարավոր  
փորձի արդյունքը—մածունն ու սպասը իրքե թթու  
կենսամթերքներ:

Բացի այդ, պետք ե խուսափել մինչև աշնանային  
մրգերի համար՝ ծծկերին գարնանային մրգեր՝ ծի-  
րան, թութ, վարունդ տալուց:

Մծկեր յերեխայի հավելյալ սննդի հետ կտաված  
մյուս հարցերի շուրջը պետք ե խորհրդակցել կոն-  
սուլտացիայի բժիշկների հետ:

Այսուհետև ծծկեր յերեխային պետք ե տրվի նոեկ  
ջուր, թեյ, ծծկերն ել ե ծարավ զգում, Այդ ծարավը  
պետք ե պլանաշափ կերպով հագեցնելը ջուր տալ  
նրան, յերբ և ինչքան նա ցանկանում է, Քանի վոր  
ծծկեր յերեխանների մեջ նյութերի փոխանակությունն  
անհամեմատ ավելի արագ ե ընթանում, ուստի և ջրի  
կապր նյութերի փոխանակության հետ մեծ և յիկ  
կարեվոր:

Գետք ե յերեխային զով պահել, մաքուք ոգում,  
ստվերում, վորովհետև կիզիչ արևը նրան գերջերմաց-  
նում ե, Գերջերմացնում ե նրան և տաք հագուստը:

Գերջերմացումը ճնշում ե ծծկեր յերեխային,  
թուլացնում նրան և նրա մարսողական ուղիների  
փունկցիան, և հետեարար, նախապատրաստամ և  
նրան հիվանդանալու:

Անագին կազզուրիչ և թարմացնող ազգեցու-  
թյուն ունեն ջրային շփումները, լողացնելը: Դրանց  
շնորհիվ մաշկը մաքրվում է, գուրանանում նրա փունկ-  
ցիան—թունավոր, անպետք նյութերի արտադրումը.  
Ջրային շփումն յերեխային թարմացնում, աշխուժ և  
գարձնում: Մեր վերն ասածներից պարզ ե վոր  
ամառացին լուծը մեծ վտանգ ե ներկայացնում ծծկերի  
համար: Հետեապես այդ լուծի զեմ պետք ե և կարելի  
յե մարտել:

Գիտական նվաճումները հետեյալ մաքառման  
ժիջոցներն են առաջադրել:

Ծծկերների հպատակ հարազատ սնունդ ե կնոջ  
կաթը, վորը և սնունդ ե և զենք զանազան վարակ-  
ների զեմ կովելու համար:

Մանկության պահպանության հերթական խըն-

Դիրն ե՛ կազմակերպել մեծաթիվ բնակչության վայրեւ-  
րում կնոջ կաթի հավաքակայաններ, նկատի ունենալով  
այն, վոր կնոջ կաթը լավագույն կանխարդելիչ մի-  
ջցն և ամառային լուծի գեմ:

Մեր կլիմայական պայմաններում տաք ամիս-  
ներին կովի կաթը իրրե հավելյալ սնունդ պետք ե  
արգելել, վորովհետեւ այդ կաթն ամենից ավելի հեշտ  
վարակվող, կազմալուծվող սննդանյութն եւ.

Կաթը պետք ե փոխարինել բընձի լեփուկով,  
5 ամսականից մեծ ծծկերների համար՝ մածունով՝ իսկ  
կաթնապուրը՝ սպասով:

Գարնանալին պտուղներ՝ ծիրան, թութ, չպիտի  
տալ ծծկերներին: Նմանապես պետք ե խուսափել  
գերջերմությունից. պետք ե յերեխալին թեթև հագցը-  
նել, արեվի տակ չպահել, այլ պահել հով ստվերում,  
բաց ողում:

Ծծկերին պետք ե ջուր տալ:

Մաշկն առանձնապես պետք ե լավ խնամել  
ջրային շփումներով, վաննաններով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԵԶ
1. Ինչու յեն ծծկեր յերեխաները հաճախ հի- վանդանում . . . . .	3
2. Ինչու յեն ծծկեր յերեխաներն առանձնապես յենթակա լուծի . . . . .	5
3. Լուծի նշանակությունը ծծկերների հասակում . . . . .	6
4. Լուծի պատճառները . . . . .	7
5. Լուծի տեսակները ծծկերների մեջ . . . . .	10
6. Հասարակ լուծ . . . . .	10
7. Թունավոր լուծ . . . . .	12
8. Արյունալուծ կամ դիղենտերիա . . . . .	13
9. Ի՞նչպես կանխել ծծկերների լուծը . . . . .	14
10. Ի՞նչպես կանխել լուծը . . . . .	15



ՀՀ Ազգային գրադարան



NL0977658

ФЕВ. 1960.

5

3688



Проф. Габриелян

Как беречь грудного ребенка от  
поноса

Гиз ССР Армении, Ереван, 1937 г.